

ամենն ալ նոյն յոռի վարչութեան, անգգայութեան, և անկման վիճակին նկարագրերը կրնան: Առեւտրն անգգամալուծեալ է, կենաց և ընչից ապահովութիւն չկայ, երկրագործութիւնը յետագէժ և խեղճ վիճակի մը մէջ կը գտնուի, հաղորդակցութիւնը ընդհատուած է՝ լաւ ու զինքը չկենսողուն պատճառաւ, ժողովուրդը կը տառապի, դատարանը կաշառակուռ անձանց ձեռք են, վարչութեան անունը միայն կայ, աղքատութիւնն ընդհանուր է, ամեն կողմ յուսահատութիւն կը տիրէ: Ճշմարիտ է որ Սըր Հ. Լէյքըր Սուրբիոյ մի քանի բաղդաւոր գաւառները տեսաւ, որք հանգէս կը կատարէին իւր գաղտեան առթիւ, և նշանակութեան գուրկ չէ որ դեսպանը՝ Միտհաթ փաշայի աղբու և կարող վարչութեան ներքեւ յառաջդիմութեան ու բարեփոխման նշաններ երեւան դալը նշմարած է: Բայց Սուրբիոյ մէջ կեցած բարեփոխման նշանները տակաւին բացառութիւն մ'են Ասիական Թուրքիոյ ընդհանուր վիճակին հետ բաղդատմամբ, և եթէ, ինչպէս կ'ըսուի, Միտհաթ փաշան հրաժարուած ամեն ինչէն, այդ նշաններն ալ հասանակաւորաբար տեսական չափով լինին: Միայն անցեալ յուլիս ամսոյ մէջ էր որ մեր դեսպանը՝ Սուրբիոյ դատական իշխանութեանց ամենէն անկարող և յուսնեղէն երկու անձի պաշտօնակի լինիլը կարողացաւ ծանուցանել: Մինչդեռ ամիսներ առաջ վերադարձիւն ըրած էր Բ. Դրան թէ այդ երկու անձերուն նախագահած դատարանաց չափն նոյն իսկ Անգղիացւոյ դատերը չէին տեսնուած և անոնց գոհացում չէր տրուած:

« Միւս նահանգներէն ալ յոռի վարչութեան և անգգայութեան գանգատներն ընդհանուր և միաձեւ են: Արդարեւ, ժողովրդեան ամենամեծ մասն եղական կերպիւ հլու և համբերող է: Սերաստիոյ ընդհանուր հիւսիսաւոր Ռիւրն գնդապետը կը գրէ թէ. « Երկրին ամենամեծ մասն հանգարտ և խաղաղ վիճակի մէջ տեսնելով չգործող անհար և, երբ ամեն պարագայ, կանոնաւոր զօրաց կատարելագոյն բացակայութիւնն, և իրականացնող ոտակաւորութեան ալ բացակայութիւնն ի նկատ առնուին, դարմանալի կը թուի որ աւագակութիւնը և բանութիւնը աւելի չեն, և կը հասկնան թէ կառավարութեան կողմէ փոքր ջանքով մը հնար պիտի լինի ամեն կողմ ապահովութիւն հաստատել: » Բայց դժբաղդաբար, այդ փոքր ջանքն իսկ մինչև ցարդ չէ եղած: Հետզհետէ աւելի աղբուրութեամբ յանգնանութիւններ լինելուն հակառակ Դուռն անտարբեր ու անզգայ կը մնայ: Նահանգի մը մէջ կաշառակուռ դատաւորն մը պաշտօնակութիւնն, ուրիշ նահանգի մը համար նոր կառավարչի մ'անուանումն, և երրորդ նահանգի մը համար ալ լաւ կաղժեղ բայց իրապէս ու և է արտօնութիւն չունեցող յանձնախմբի մը զրկուիլն, ահա ասոնք են բոլոր այն միջոցները՝ զորս Դուռն մինչև ցարդ ձեռք առած է փոքր-Ասիոյ վերածննդութեան համար: Բայց միւս կողմէն, դարերէ ի վեր երկրին կրած չարիքներն անդարման և անպատիժ մնալով աւելի կը սաստկանան և

ներ ընելով կը պահանջէ որ Ասիական Թուրքիա իրապէս Անգղիոյ կողմանէ կառավարի, և այս առթիւ կըսէ թէ իւր տեսած Թուրքերն և Քրիստոնեայներն՝ որք Թուրք կառավարութեան մեծագոյն դժգոհ են, դո՛ւր արտի լինին այնպիսի փոփոխութեամբ մը:

մինչև իսկ կը քաջալերուին վերջերս Օսմանեան կառավարութեան բռնած անհոգի միջոցներն, որ հաղաբարեկրորդ անկանոն Չէրքէզներ սանձարձակ փոքր Ասիա զրկեց, որպէս զի այդ արդէն վնասեալ երկրին վրայ խաժելով աւարաւորութիւն ընեն:

« Փոքր Ասիոյ մէջ դործող վիճակին վրայ եկած ամենավաւերական տեղեկութիւնք այս տխուր ներկարագրերը կրնան: Չեմք զարմանար տեսնելով որ այդ երկրին տարաբաղդ բնակիչներն, ինչպէս ասկէ առաջ, այժմ ևս կը հարցնեն թէ Անգղիացիք ե՛րբ պիտի գան: Վերջերս այդ կողմերը պարտող ուղեւորք լրջապէս կը պահանջեն որ Սիւրբ-Թիւրք պայմանագրին այնպիսի ձև մը տրուի, որ զայն չինողներուն անգամ մտքէն չէր անցներ: Այդ պայմանագրին մէջ Սուրբիոյն խոստացածն էր՝ « կառավարութեան բարեփոխման և Դրան թէ՛ քրիստոնէոյ և թէ՛ ուրիշ հաստատակց պաշտպանութեան համար բարեկրորդութիւններ ներմուծել, որք յետոյ երկու տէրութեանց միջև համաձայնութեամբ պիտի որոշուին: » Այդ խոստումն ստուգելու մինչև ցարդ չգործադրեցաւ: Բայց ատոր անդործադրութեան յանդիման ընէ Անգղիական կառավարութեան և ոչ ալ Կ. Պոլսի գաղտնի իւր ներկայացուցչին վրայ կրնայ ձգուիլ: Այս վերջինը կրկին և կրկին անգամ ամեն աղբուր յանգնանութիւններ ըրաւ: Դրան իշխանութեանց, բայց իւր յայտարարութեանք մինչև ցարդ իրական արդիւնք մը չունեցան: Կը մնայ տեսնել թէ ի՞նչ արդիւնք յառաջ պիտի գայ այն կրօնական բողոքէն, զոր մեր Կ. Պոլսոյ թղթակիցը կը ծանուցանէ այսօր, և որ կրնայ նշան մը համարուիլ թէ աւելի կտրուի ընթացք մը բռնուիլ սկսած է (1): »

Միտհաթ փաշայի հետեւեալ բառը

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Լոնտոն 7 նոյ.

Թոյմոյ լրագրին անգղիական իշխանութիւնը վերջապէս նկատմամբ արեւած որդու մն հաստատելով կըսէ թէ Լոնտոնի Օսմանեան դեսպան Միտհաթ փաշան բացառապէս աղակաւորութիւն տաւ Սալիպարի մարքիզին թէ Թուրքիոյ արտաքին աշխարհավարութիւնը չէ փոխուած, թէ Սուրբիոյ մեծագոյն կրօնական կարեւի եղած բարեկրորդութեանց զործադրել, և միտք ունի Հայաստանի կառավարչ անուանել Պէյքըր փաշայ: Գետական յարեց թէ կը յուսայ որ Անգղիա իւր նաւատորմը Թուրքական ջրերը զրկէ եւ կը կենայ: Սալիպարի մարքիզը պատասխանեց թէ բարեկրորդմանց զործադրութեան մէջ նոր յաջողութիւն մ'անընդունելի է, թէ Անգղիա զործ կուզէ և ոչ թէ խօսք, բայց Միտհաթ փաշային տուած հաւատարմութեամբ զայն՝ անգղիական կառավարութիւնն առ այժմ կը դադարեցնէ այն միջոցները, զորս ձեռք առնելու միտք ունէր:

(1) Թոյմոյ լրագրոյ Կ. Պոլսոյ թղթակցին ծանուցած այս երկուական բողոքը՝ մաքսատանց հասցիները նոր փոխառութեան մը երաշխաւորութիւն տալու կառավարական ծրագրին դէմ Պ. Ֆուրնիէի և Սըր Հ. Լէյքըրի ըրած բողոքն է, որ յիշեալ թղթակցին տուած տեղեկութեանց նայելով, շատ դժուարեցութիւն ըրեր է թէ՛ Պոլսոյն և թէ՛ Դրան վրայ, և շատ մեկնութիւններ տրուել է Անգղիական դեսպանին այս խիստ դործողութեան, զոր կ'երեւի թէ Թոյմոյ վերջերս Սըր Հ. Լէյքըրի ըրած նաժ (կամ թողած . . .) աղբուրն թացքին յառաջարկուն մը համարած է ասկէ երկու շաբաթ առաջ: Ծ. Խ.

Լոնտոն 7 նոյ.

Ձինուորական երկրաշարժարտարապետաց խումբ մը Միտհաթ փաշայի հրաժարութեան չինութեանը կատարելու:

Լոնտոնի Ռուսական դեսպան Դուրապա կոմսն, որ հրաժարեցաւ այս պաշտօնէն, առժամանակեայ կերպիւ հասարակային գործերէ պիտի քաշուի և անհատական կենք պիտի վարէ:

Վիէննա 7 նոյ.

Մինչև ցարդ Գաղղիոյ, Անգղիոյ, Սուրբիոյ և Գերմանիոյ միջև որ և է համաձայնութիւն չկրցաւ հաստատուիլ այն սկզբանց վրայ, որք Սերպիոսի երեւոյն պարտուց կարգադրութիւնը պէտք է կանոնաւորեն:

Պուրթէ, 6 նոյ.

Ռուսական իշխանը Տոպոլսկայ քաղաքում ուղեւորութեան միջոցին համայն ժողովրդեան և մանաւանդ խաւաք կողմէ ամենամեծ համակրանք ընդունուեցաւ: Իշխանն ալ շատ գոհ եղաւ խաւաքէն, որոց ներկայացուցիչները սիրոյ և անձնութեան խիստ շնորհքով խօսքեր ուղղեցին իրեն ամեն տեղ: Իշխանը մեծ դուրսերը ցրուեց միջոցներու վերանորոգման և աղքատաց օգնութեան համար: Իշխանը ուրախ եղաւ տեսնելով այն բարեկարգութիւնն ու գործունէութիւնն, որ այս աշխատանքի ժողովրդոց մէջ կը տիրէին, ինչպէս նաեւ այն բարեփոխման որ արագացաւ տեղի կուենայ ասկէ առաջ շատ նեղութիւն կրած այն նահանգին նկատման վիճակին մէջ: Իշխանը կրցաւ միտքարկը գործնաւոր և քաջալերել զայն՝ պատուոյ այլ և այլ նշաններով, զորս այս ուղեւորութեան միջոցին բաշխեց:

Լոնտոն 6 նոյ.

Անգղիոյ պաշտօնային զեզնի՝ որ 100ին 2 էր, 5ի եղաւ այսօր:

Լոնտոն 7 նոյ.

Օսմ. Բոնո.	11 3/8
Փոլս.	1866 14 1/2
»	1895 11 1/8
»	1871 55 3/4
»	1872 21
»	1873 42 3/8
»	1874 74 1/4
Անգլ. Բոնո.	97 15/16

Փարիզ 7 նոյ.

Օսմ. Բոնո.	11.45
Փարիզ. Բոնո.	50/0 81.80
»	» 70 85.60
»	» 50/0 115.60

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Քիւրդերուն ապստամբութիւնն արդէն բաւական կ'ըրադեցնէր կառավարութիւնն, և այժմ Սուրբիոյ յէն լուր կուգայ թէ ոչ նուազ մը տահադութիւն պատմաւորաւոր ապստամբութիւնն մը ծագած է Տիւրքիաներուն երկրին մէջ:

Ասկէ առաջ ծանուցինք թէ Տիւրքիաներն աղջիկ մ'առեւանգեւուն վրայ՝ իսլամ դիւղալուց և անոնց միջև կուր մը տեղի ունեցած, 15 հազար մեռած և նոյնչափ հոգի ալ վերաւորուած են: Իսլամը կառավարութեան օգնութիւն ինքրեցին, որ Տիւրքիաներուն Շէյխներին պահանջեց որ եթէ Տիւրքի Թուրքական իշխանութեանց յանձնուին դատաւելու համար, Շէյխներն Օսմանեան դատարանաց հպատակել չուզելուն վրայ, Միտհաթ փաշան յանցաւորները բռնելու դործը կայսերական հինգ երորդ բանակին ընդհանուր հրամանատար Ահմետ Եւսուպ փաշային յանձնեց, որ զձեռն վաշտան 4000 (չորս հազար) զօրքով և թնդանութիւնով Տիւրքիաներուն վրայ զրկեց: Աստիճաբար 15,000 (տասն հինգ հազար) հոգի Օսմանեան զօրաց գէժ գնելու համար ըստ քաջուեցան:

Այս անցքերն Հօրանի բռնները տեղի կուենան: Յայտնի է որ այս բռններու Տիւրքիաներն, որք 100,000 (հարիւր հազար) լի չափ կան, անկախ ցեղ մ'են և 800 տարիէ ի վեր որ և է կառավարութիւն չեն ճանչեր և սուրք չեն վճարեր: Սուրբիոյ Եղիպոս

տական գրաւման ժամանակ՝ իսլամ հիւսիսեան ի զուր աշխատեցաւ զանոնք նուաճել: Տիւրքիք խիստ պատերազմող ցեղ մ'են, և այնպիսի կազմուորութիւն մ'ունեն, որ երբ որ և է կողմէ իրենց վրայ յարձակում մը լինի, կրնան անմիջապէս զինուորական զօրութիւն զրկել հոն: Երբ ցեղին անկախութիւնը վտանգի մէջ է, կրնան 25,000 զօրք հանել, և մինչև իսկ Պէտտին կոչուած ցեղին և Մարտիներուն հետ դաշնակցել:

Այս պարագաներն ի նկատ առնելով, այժմ անոնց վրայ զօրք զրկելու անօրէնութիւնն առաւելութիւն կը վերցնէ: Կըսուի թէ կառավարութիւնն այժմ խիստ զբաղեալ է այլուր, և Հօրանի ապստամբութիւնն ուրիշ արդիւնք չպիտի ունենայ, բայց եթէ Սուրբիոյ մէջ ընդհանուր անկարգութիւն ու անկայանութիւն պատճառել, խիստ դժուար և մինչև իսկ անհար է Տիւրքիաները նուաճել այժմ, և երբ Օսմանեան զօրքը պարտութիւն մը կրէ, ապստամբք աւելի պիտի քաջալերին: և ըստ որում իրենց չորքը գտնուող ժողովուրդը դժգոհ են Օսմանեան վարչութեան, այդ արամադրութեան օգուտ պիտի քաղեն: Դամասկոսէն գրուած նամակ մը կըսէ. — « Ժողովուրդն անհամբեր կ'ապստէ յաճախ խոտաւորուած բարեկրորդմանց դործադրութեան: Հօրանի ապստամբութիւնն աղբարարութիւն մ'է կառավարութեան համար. պէտք է կանոնաւոր վարչութիւն մը տալ Սուրբիոյ և անկարգութիւններն ու անկայանութիւնը դադարեցնել: Ահա այս պայմանաւ է որ, եթէ փութով ի գործ դրուի, Թուրքիա պիտի կրնայ Սուրբիոյ վրայ ունեցած տիրապետութիւնը պահպանել: »

Ինչպէս կը տեսնուի, դործը Թուրք լրագրաց գրածին պէս վարդի գոյներով չներկայանար, այլ ընդհակառակն ծանր չփոթութիւնը կ'ապառնան Սուրբիոյ կողմէն:

Բ. Դրան և Պարսկական կառավարութեան միջև գոյացած համաձայնութեան մը համեմատ, խառն յանձնախումբ մը պիտի հաստատուի երկու տէրութեանց սահմանադրուց վրայ բնակող բաղձաթիւ Գիւրդերուն ո՛ր տէրութեան հպատակ լինելու որոշում համար: Յայտնի է որ այս Գիւրդերն երբ Թուրքիոյ կողմէն ներք մանեն՝ Պարսիկ հպատակ կը լինին, իսկ երբ Պարսկաստանի կողմէն դժուարութիւն մ'ունենան՝ Օսմանեան հպատակ կը լինին:

Թուրք լրագրաց հրատարակած տեղեկութեանց նայելով, նախարարաց խորհուրդն իւր վերջին նիստերէն միայն մէջ « Պէրլինի դաշնագրով յանձնարարեալ » բարեկրորդութեան վերջնականացնելու խորհրդածութեան նիւթ ըրեր է: Կ'երեւի թէ այս բարեկրորդութեանը նոր « կանոնագրի » մը մէջ կ'արձանագրուին, որ ի մտոյ պիտի գործադրուի երբ:

Բարեկրորդմանց Գոմիսիներն իւրենց նախորդներուն նմանեցան: Կը յուսուի որ բարեկրորդմանց կանոնագրերն ալ իրենց նախորդաց չեն նմանիր, և բոլոր այս խօսքերուն ու խորհուրդներուն տակէն ելած բարիք մը կը ծնի գաւառական դժբաղդ ժողովրդոց համար:

Ռոտիկանութեան նախարար Հաֆիզ փաշան մայրաքաղաքիս և ընդհակայից բոլոր պահակաւորներուն հրամանագիր մը զրկեց, որով ինչ ինչ յանձնարարութիւններ կընէ հասարակաց ապահովութեան պահպանութեանը համար:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Երէկ Ազգ. Ժողովոյ Մայր դիւանին և նախաքննիչ դիւանաց ատենապետներն ի Պատրիարքարան դուռնաբերելով վարչական կազմութեան խնդրոյն զբաղեցան :

Կը լսեմք թէ Հակահասոնեան ազգայնաց մէջէն 40-50 պատուաւոր և ազդասէր անձինք և քանի մ'ալ եկեղեցականք վաղը Ս. Պատրիարքին պիտի երթան և անոր իրաւասութեան ներքեւ մանեն :

Վերջին տեղեկութեան մը նայելով՝ կըսուի թէ Հայէպի Անդղիական Գաղղիական և Խաղաղական հիւպատոսներն Ունիոյ համար ուրոյն վարչութիւն մը տրուելու և Հայ դպրւմադամի մասին համաձայն են եղեր : Բայց Ուստիոյ հիւպատոս Պ. Խալաւով կը հակառակի եղեր :

Տիգրանակերտէն Ալաւսիա աքսորուելու համար ճանաչող հանուած փեղեկերը ցարդ Հայէպ կը դռնըւին իրենց ընտանեօքն հանդերձ, և կ'ըսուի թէ ամեն ալ բաղձակին են և անոնցմէ մին միայն Յէ կին ունի եղեր :

Կառավարութեան կողմէ ասոնց ապրուստն ապահովուել է : հետեւին քաղցրութեամբ կը վարուին և կ'ըսուի թէ կառավարութեան կողմէ ամառական ալ պիտի կապուի իրենց :

Ստայգ տեղեկութեան մը նայելով՝ Մշտ մէջ բանտարկուող յանցաւոր փեղեկերը՝ պատժող պայմանաւ ժամին դեռ չըրացած՝ հաշիւէ և ճանաչող արձակուել են :

Կերէի թէ այս ալ տեսակ մը բաւերնորոգում է :

Գոհութեամբ կը ծանուցանեմք թէ Մեծ. Տօքթ. Բեաթիկեան էֆէնտին ՚ի նպատակ իրենց ընկերութեան անուանուելու և Զարուհի Համամճեանի բացած հանգանակութեան 10 Օսմ. սակի զրկելու է :

ԹՂԹԱԿՈՒԹԻՒՆՔ ՄԱՍԻՍ ԼՐԱԴՐՈՑ

Տրապիզոն 18 հոկտ. 1879
Խմբագրապետ Տէր :

Այս քանի մ'անգամ է որ Ձեր Կարնոյ թղթակիցն և ընդհանրապէս բոլոր լրագիրք կը գանգատին կայսերական ֆառիսէրներուն անգործութեան : ասոր պատճառն իմանալու համար կարծեմ աւելորդ է Ձեր թղթեցողաց պատմել հետեւեալը, որ թէ՛ առաջին ֆառիսէրին արամաքութիւններն և թէ՛ Դրան խոստումներն ու գործերը լու երևան կը հանէ : Երբ գաւառիս կուսակալ եռուստֆ վաշան կարնոյ գաւառին համար առաջին ֆառիսէր կը կարգուի և օտար լրագիրներէ կ'իմանայ թէ աստիկ ստիպողականութիւն կը տրուի բարեկարգութեանց գործին, յետին ծայր մոտատնջութեան մէջ կ'ընկնի թէ ինք կ'նշալէս կարող պիտի ըլլայ գործել և անհամբեր հրաշանդոց գաւառեան կ'ապասէ : Երբ վերջապէս կ'ընդունի զաննք, առանց հետեւեալ օրուան սպասելու բոլոր գիշերը կը նստի ու կը կարգայ, և հետեւեալ օրը իւր մէկ մտերմին կը յայտնէ թէ փառք Աստուծոյ գործադրութիւն չկայ, այլ քննութիւն և տեղեկագրութիւն ալ բան չունի նէ ժողովուրդը բարե-

նորոգում թող սպասէ :

Գաւառիս այժմու կուսակալ Վսեմ Սըրբի վաշան այցելութեան ելած է գաւառին դիւանար քաղաքները : Լոկայինք թէ թիւրքոյն գտնուող Լազ գաղթականք շատ լու ընդունելու ինքն ինքն չեն ըրեր կուսակալին՝ իրենց Եւթը կորելուն համար, այնպէս որ Սըրբի վաշան ստիպուել է քաղաքէս զօրք կանչել բարեկարգութեանը պահպանելու համար :

Սըրբուրութեան նորոգ ընտրեալ պաշտօնեայնքը քաղաքս ու հազան երկու ամիս կայ, առաջին ամիսը պարապ անցաւ Բամազանի պատճառաւ, երկրորդն ալ նոյնպէս սենեակներու բաժանման և շինութեան պատճառաւ : Թէև ուշ՝ այլ դոհուութեան արժանի գործող մ'սկսաւ գաւառիս մէջ Մեծ. Տօքթ. Բեաթիկեան իւր պաշտօնը, որ այժմ Պեռաթիկ կը կոչուի, Կառավարութեան, որք քաղաքիս մէջ նշանաւոր էին իրենց անկարգութեամբք : Այս պաշտօնակալութիւնը մեծ գոհութիւն պատճառեց ոչ միայն Բիւստանէից, այլ և Մահմետականաց : ասկայն ուրախութեան ու գոհութեան աւելի մեծ եղաւ բոլոր Տրապիզոնցոց զարմանքն ու զայրոյթն, երբ նոյս վերահաստատութիւնը լուսեցաւ : Միւս ֆէթիխը՝ կամ քննութիւն բացաւ կամ ոչ զանոնք պաշտօնակի ընկաւ համար : Եթէ քննեց, հարկաւ ճշմարտութիւնը իմացաւ : Եթէ չքննեց, ինչպէս պաշտօնակի կ'ընէ : Դարձեալ այդ երկու պաշտօնեայնքը կամ յանցաւոր էին կամ ոչ, եթէ չէին ինչո՞ւ պաշտօնակի եղան : Եթէ էին ինչո՞ւ վերահաստատուեցան : Ո՞վ պիտի տայ ասոնց պատասխանը : Բանիմաց ընթերցողը :

Թէև անագան՝ այլ իբր գաւառական ժամանակագիր պարտիմ իմանել Ձեր ընթերցողաց թէ բարձրաշնորհ խրիմեան Սըրբուրան ամսոյս 6ին քաղաքս հասաւ և արժանաւ պայել պատուով ընդունուեցաւ : Հետեւեալ օրը, ինչպէս նաև ուրիշ երկու օրեր ժողովրդեան քաղցրէց իրեն ընտանի ոճովը : Եթէ Հայրիկ հոգեւորապէս միթարեց գոգող վուրդը, ժողովուրդն ալ չմոռցաւ նիւթապէս միթարել զՀայրիկն : Սէր և անոր յարակից պարսքը փոխադարձ եղան : Ժամանակը 10րդ օրը մեկնեցաւ աստի ի կարին, ուր արդէն հասած լինելու է : Խրիմեան Սըրբուրան չմոռցաւ այցելել Ազգային վարժարանն և քաջաբերել երկուսուսանողներն, առ այս ունեցած սիրոյն ի յիշատակ վարժարանին նըւրբից իւր երկերէն 35 հատար : Այս մասին բոլոր ուսանողաց շնորհակալութիւն հրապարակաւ յայտնելը պարտք կը համարիմ : Շնորհակալութիւնն նաև Ս. Երուսաղէմայ միաբան Արթիւրայեան Տ. Սահակ վարդապետին որ վարժարանը այցելելով բարեհաճեցաւ երուսաղէմ՝ տպեալ 19 հատար այլ և այլ զրքեր նուիրել :

Ձեր պատուական լրագրոյն հոկտեմբեր 6ի թուոյն մէջ վաղը թի մէկ հատուածը կը թարգմանէ, յորում ըսուած է թէ Բ. Գուսն օտար թղթատարութեանց ջնջումը պիտի պահանջէ : Ըստ իս ամենին հարկ չկայ այդ պահանջման, քանի որ Օսմանեան թղթատարութիւնը թղթատարական միութեան մասնակից է և օտար թղթատարութիւններէն աժան գնով կ'ընդունին նաև մանրերը, բաւական է որ ժողովուրդը վստահութիւն ունենայ թէ իւր սուած նամակները պիտի չկորսուին կամ ուրիշ մը ձեռք պիտի չանց-

նին : Իմ ըսածս փորձալ ալ տեսնուեցաւ : Երբ Օսմանեան միջազգային թղթատարութիւնը հաստատուեցաւ, ի սկզբան այնքան նամակ չէր ընդունէր, բայց երբ անսուսեցաւ թէ անոր յանձնուած նամակները իրենց տեսող ձեռքը կը հասնին, հետզհետէ աւելցան և ալ աւելի պիտի աւելնան եթէ այդ վարչութիւնը գաւառներուն համար ալ պատասխանատու հրատարակէ ինքզինք : Ուստի խնդիր միայն վստահութիւն արտադրելուն վրայ է :

Քաղաքիս մէջ չորս այլ և այլ թղթատարութիւնք կան, Օսմանեան Ֆրանսական, Աւստրիական և Ռուսական : Օսմանեան պարզ նամակի մը համար 40 փարա պարա աւանակնիւ Տրապիզոնի բոլոր վստահականաց նամակներն ընդհանրապէս վերջին երեք թղթատարութեանց միջոցաւ կը փոխանակուին : Ինչո՞ւ համար, քանի որ Օ/Ո/ին 50 տարբերութիւն կայ զնոյ մէջ : Վստի զի վերջինները աւելի կանոնաւոր, աւելի ապահով և աւելի արագ են : Այս տեղի Օսմանեան թղթատարութեան պաշտօնէից անհոգութիւնը զարմանալի է, դոնէ միւս երեքներուն օրինակէն չեն խրատուիր եթէ մասնակցայ հատի չափ ազգային նախանձ ունենային, գործերը բոլորովն ուրիշ կերպարանք կ'առնէին : Այս տեղ թէ մարդ ներկայ չգտնուի Օսմանեան թղթատարութեան ցրուելուն, ապահով է որ իւր նամակը կամ լրագրաց ծրարը կը կորսուի, վստի զի բաց պատուհանի մ'առջև մազի մը մէջ գրուած են անոնք, և ով որ ուղէ՛ կրնայ ուղած նամակը կամ լրագիրն առնուլ : ոչ ոք հակող կայ, ոչ ոք իմացող կայ : Այսպիսի դէպքեր հազուադիւր չեն : Գոնէ թղթատարութեան մէջ բարեկարգութիւն հաստատուի, այդ ալ միթէ ստակի կարօտ է, քանի որ այնքան պաշտօնեայնք կան և օրինակն ալ մեր աչաց առջև է : Մեզի ամօթ չէ՞ որ մեր երկրին մէջ մենք աւելի օտարներուն վստահինք քան մեզի : Ուրիշ ո՞ր երկրի մէջ նմանօրինակ բան մը տեսնուած է :

Ձեր ընթերցողներէն Բն

ՆԱՄԱԿ Ի ՎԱՌՆԱՅԻ

(Երանաւորութիւն ԳԵՒ 2460)

Յետ աւարտման Ս. Պատարագին, մի և նոյն հանդիսով Նորին Արքայութիւնը յառաջնորդարան ուղևորեցաւ : Ընկերակցութեամբ Վսեմ. Կառավարին և հիւպատոսաց : Երբ և պաշտօնական ընդունելութիւն տուաւ առաջնորդարանի ընդունելութեան սրահին մէջ :

Վսեմ. Կառավարին ալ յանուանէ և ի պաշտօնէ ներկայացուց բոլոր ներկայ գտնուող հիւպատոսները, որոնց Նորին Արքայութիւնը մի առ մի խիստ վաշտեղ կերպով յարգանք մատուց : Յետոյ Մեծ. Պ. Յ. Մ. Մարկեան որ Նորին Արքայութեան բազմակողմեան միջոցին պաշտօն ունէր ընկերակցելու սոյն բարձրատիման հրապարակներուն, Կաղղիցուա ներկայացուց ներկայ գտնուող Յոյն և Պուլիար արքեպիսկոպոսաց ներկայացուցիչներն և միւս հրաւիրեալ բարձրատիման պաշտօնեայնքն, որոնց ևս սիրալիք մեծարանք մատուց Նորին Արքայութիւնը : Այս ընդունելութեան միջոցին քաղցրաստ ռճով մը շնորհակալութիւն յայտնեց այն հօգր ազգաց ներկայացուցիչներուն, որոնք բարեհաճած էին պատուաբերել իրենց ներկայութեամբ ուր կար ազգի մը մի եկեղեցականը, զովեց և օրհնեց քաղաքակրթեալ Եւրոպայի, յոյս չողովին և բարօրութիւն մաղթեց իշխանին և ժողովրդեան Պուլիարից, և այսպիսի գոհ և սքանչացեալ արձակեց սիրալիք մեծարանք :

Յետոյ Նորին Արքայութիւնն անձամբ այցելութիւն տուաւ բոլոր սէրու թեանց ներկայացուցիչներուն ընկերակցութեամբ Մեծ. Պ. Մ. Մարկեան և թագ. խորհրդոյ ատենապետ Պ. Մուրատ հաճի Սարգիսեանց ազգայնց : Անոց ու է յիշել, որ խիստ չքեղ և պատուաբերական եղան հիւպատոսաց բարձրագոյն ընդունելութիւնները :

Նիստերու արժանի լինելով՝ որ կը վկայէ Նորին Արքայութեան արժանեաց, այն է թէ այս պատուական զարմուէքը և յոգնութիւնները չեն արդարեւ Նորին Արքայութիւնը ազգային քաղաքակրթական խնդիրներու յաճումն առաջ : Նախքան 24 ժամ միջոցին մէջ ազգային երկուսական մի հակիրճ ցուցակն և յառաջ պէ՛մ արուեստագիտաց և ազգային պաշտօնէից անուանց և զարգաց վիճակագրութիւնը ստացաւ Թագ. խորհրդոյ կողմէն, Կառավարութեան առջև միջնորդեց և խոստում առաւ տարիներէ ի վեր տուեալ մնացած ազգային կարեւոր մը խնդիրը վերջացնել ՚ի գոհութիւն ազգիս : Գրովեամբ բարեխօսեց Վսեմ. Կառավարչին յարձակում երկու Հայազգի բանտարկելոց, նոյնպէս ստիպանութեան ձեռնարկութիւնը խնդրեց մի ուրիշ խնդրոյ համար եւ : եւ :

Հետեւեալ առաւօտուն՝ ուրախ ըստ Տաճկաց ժամ 2 1/2ին Նորին Արքայութիւնն առաջնորդարանէ մեկնած տան տեղեցոյ քահանաները և երեւելի անձինք 50 կառքի չափ նստած՝ Նորին Արքայութեան հետ ուղևորեցան մինչև ՚ի կայաքան երկաթ ուղւոյն, և ի պատիւ յարգանաց, թագ. խորհրդոյ ատենապետ մեծ. Մուրատ էֆէնտին և զանազան Գերոնէան Պետրոս ազգայն և տեղեցոյ պատուաւոր անձինքներէն մէկ քանիները նորին Արքայութեան հետ ուղևորեց եղան մինչև ՚ի Եւսթիւ :

Յայտնէս ահա մեկնեցաւ քաղաքէս Գեր. Խորին Արքայան պատիւ և փառք բերելով ազգիս և քաղցր ու անմոռաց յիշատակներ թողլով քաղաքիս Հայ ժողովրդեան սրտին մէջ :

Հաճեցէք . . . Խմբագրապետ ՏՐ. Ներկայ նամակս հրատարակել Ձեր ազնիւ թերթին մէջ յարախօսութիւն և ՚ի միթարութիւն ազգասիրաց :

Ե. Զ. Դ.

Լաւան Դիւանագրաց

Բ. Երեկոյթ Բ. Շրջանի :

Կրթատիրաց ընկերութիւնը պարտանձին կը համարի ծանուցանել արգոյ Հայ հասարակութեան թէ յառաջիկայ չարաթ գիշեր 27 հոկտեմբերի Սէլամբրդի Ս. Խաչ վարժարանի թատրոնին մէջ՝ ժամը 2 1/2 ին սկսելով պիտի բանախօսէ Մեծապատիւ Տօքթ. Պարսնիկ էֆէնտին Մատթէոսեան « Ի վերայ մարտգութեան և գործարանաց նորին » Պահ ընդմէջ նուազ պիտի հարկանի Բիւստայի վրայ : Կը հրաւիրուին ամեն ազգայինք երկու սեւեր : մուտքն է 2 զրը արժաթ, մանկիւնք ազատ ըլլալով :

ԻՃՐԱՅԻՄԻԹԻ ԹԱՐԱՅԻՐԵՍԱՆ

ԿԵԼԵՆ ԻՍԽԱՆ

Միջառի մէ Օհանէսիւն Նիւդօգ Սարգիս Սեղրոսեան մէ Շիրիսեան զիմէթինտէ պա իրամը Թիւմարէթ մահաքիւմիւնաւէն տլուծողը օլան մէ պալիդ մուգապիլինտէ տայլին միւ մայլիլէ իւ եւալինտէ մէրհուն պուլու նան մէ ֆիլուլիթի թահիլը հիւլմէ ալլանս պիլիլ ալթմիլ պին մէ տիկէրի իւ պին ֆրանք իղրամիլէ գաղանան իւր գըթա շրմէնտրֆէր սէնէտալթը, Պօրտա գօմիւլէրլիլ մուրիֆէլիլէ ֆիլուլիթ օլուլուծողընտան, թալիլ օլանըլար թարիլի իւլանտան օն կիւնէ գասար Պօրտա գօմիւլէրլիլնէ միւրաճաւթ իլլէմէլէրի իլան օլուլուլ :

Թըշլինի էլիլէլ 23

